‹‹ Էդիթ Պրինտ հրատարակչություն››

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում:

Հաստատություն՝ Մասիս քաղաքի թիվ 3 մանկապարտեզ

Դաստիարակ՝ Ասլանյան Գենյա

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ 1. ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 5

1.1 Նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական երևակայության ուսումնասիրության տեսական հիմքերը 5

1.2 Երևակայության զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում.....8

1.3 Նախադպրոցականների երևակայության զարգացման ուղիները ոչ ավանդական նկարչության պարապմունքների ընթացքում.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Ժամանակակից հասարակության մեջ ավելի արդիական է դառնում ստեղծագործ մարդ կրթելու հարցը, ով օժտված է արդյունավետ և ոչ ստանդարտ մտածելու, նոր խնդիրներ լուծելու կարողությամբ: Մշտական փոփոխությունների պայմաններում գոյատևելու և դրանց համարժեք արձագանքելու համար մարդը պետք է ակտիվացնի իր ստեղծագործական ներուժը, որի հիմքը ստեղծագործ երևակայությունն է:

Երեխաների ստեղծագործական երևակայության զարգացման թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այս հոգեկան գործընթացը հանդիսանում է երեխայի ստեղծագործական գործունեության ցանկացած ձևի և ընդհանրապես նրա վարքագծի անբաժանելի բաղադրիչը: Վերջին տարիներին հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ ավելի շատ է անդրադարձ կատարվում երեխայի մտավոր զարգացման գործընթացում երևակայության դերի նշանակությանը:

Երևակայության զարգացման ամենանպաստավոր պայմաններից է խաղը և կերպարվեստային գործունեությունը: Կարևոր է նշել, որ այն ձևավորվում է ոչ թե ինքնին, այլ նպատակային դաստիարակության և կրթության գործընթացում:

Ն. Յու. Վենգերն իր ուսումնասիրություններում պարզել է, որ այն դեպքերում, երբ ընտանիքում և մանկապարտեզում զգալի ուշադրություն է դարձվում կերպարվեստային գործունեությանը ներառելով առաջադրանքներ, որոնք պահանջում են երեխաներից ինքնուրույն վերստեղծել և ստեղծել նոր պատկերներ և իրավիճակներ, այս երեխաների երևակայությունը զարգացման ավելի բարձր մակարդակի վրա է լինում:

Հոգեբաններն ապացուցել են, որ երևակայությունը լայնորեն ներառված է մարդու ստեղծագործական գործունեության մեջ իր կյանքի տարբեր փուլերում: Գրեթե բոլոր հոգեբանները, ովքեր ուսումնասիրել են մտավոր զարգացման օնտոգենեզը, մատնանշել են երևակայության և ֆանտազիայի կարևորության մասին երեխայի կյանքում: Լ. Ս. Վիգոտսկին նշում էր, որ հենց նախադպրոցական տարիքում է դրվում երևակայության զարգացման հիմքերը: Վ. Շտեռնը, Դ. Դյուին պնդում էին, որ երեխայի երևակայությունը մեծահասակի երևակայությունից ավելի վառ է: Ն. Պ. Սակուլինան, Տ. Ս. Կոմարովան, Գ. Գ. Գրիգորևան նշում էին, որ երևակայությունը հանդիսանում է մտավոր, էսթետիկ և կամային որակների զարգացման միջոց: Երևակայությունը երեխայի կյանքի գլխավոր մասն է: Եվ

որպեսզի երեխայի ստեղծագործական երևակայությունը զարգացնենք անհրաժեշտ է հատուկ կազմակերպված կերպարվեստային գործունեություն, քանի որ կերպարվեստային գործունեությունը և մասնավորապես մանկան նկարչությունն իր մեջ ներառում են լայն հնարավորություններ: Սրանով է պայմանավորված մեր կողմից թեմայի ընտրության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել երեխաների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործական երևակայության զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում:

ԳԼՈՒԽ 1. ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական երևակայության ուսումնասիրության տեսական հիմքերը:

Նախադպրոցական տարիքում դաստիարակության նպատակն է նպաստել երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնել նրա իմացական գործունեությունը և դրդել ստեղծագործականության, բացահայտել երեխայի ընդունակությունները և ձևավորել անձնային կարևոր հատկություններ: Նախադպրոցական տարիքի երեխան նման է ամբողջական մի զգայարանի՝ ընկալում և զգում է ամեն մանրուք, նա կարծես միշտ պատրաստ է արձագանքելու և հուզականությամբ մասնակցելու աշխարհի իրադարձություններին: Երեխան ընկալում է աշխարհը տպավորությունների և կերպարների միջոցով: Հուզական տպավորություններն ու ապրումները խորը հետք են թողնում երեխայի կյանքում և երբեք չեն մոռացվում: Մանկության հուզական ներդաշնաությամբ է մեծապես պայմանավորված մարդու հետագա զգացողությունները և վստահությունն աշխարհի հանդեպ: Աշխարհի կերպարային ընկալման հիմքում նույնպես ընկած է երեխայի բարձր հուզականությունը և երևակայության անսահման հնարավորությունները: Հուզական և կերպարային աշխարհընկալման արդյունքում ի հայտ են գալիս և դրանց հիման վրա կառուցվում ստեղծագործական ընդունակությունները [1, էջ 212]:

Նախադպրոցական տարիքը դա այն շրջանն է, երբ ստեղծագործական գործունեությունը կարող է դառնալ ոչ միայն զբաղմունք շնորհալիների համար, այլ բոլոր երեխաների համար խթան նրանց երևակայության և այլ ընդունակությունների զարգացման համար:

Ժ.Պ. Սարտրի երևակայության տեսության մեջ կարևորը համարվում է օբյեկտի կերպարի և նրա իրական նախատիպի հարաբերակցության հիմնախնդրի լուծումը: Նա հոգեբանների պես ստեղծագործական գործունեության մեջ առանձնացրել է ընկալման, հիշողության, երևակայության մեխանիզմները, նրանց կախվածությունը մարդկային հուզազգացմունքային և դրդապատճառային ոլորտներից:

Ժ.Պ. Սարտրի <<երևակայող գիտակցության>> և <<ստեղծագործական կարողության>> մեջ մեխանիզմները նման են, տարբերությունը միայն նրանում է,

որ <<երևակայական գիտակցությունը>> գործում է իրականության նկատմամբ ներքին ազատության պայմաններում, իսկ ստեղծագործական կարողությունը իրականանում է շրջապատող միջավայրի պայմաններում, մասնակի ազատության, երևակայության նոր կերպարի ներզգայական ծագման գործընթացում [13]:

Լ. Ս. Վիգոտսկին առաջարկել է երևակայության հոգեբանությունը ուսումնասիրել և դիտել որպես առանձին (ինքնուրույն) հոգեկան պրոցես: Լ. Ս. Վիգոտսկին ցույց տվեց, որ երևակայությունը ավելի շատ զարգացած է նախադպրոցական տարիքում, այն սկսվում է գործել երեխայի խաղի հետ և շարունակվում է նրա հետագա բոլոր գործունեություններում (նկարչություն, ծեփում, երաժշտություն) [4, էջ 109]:

Ի՞նչ ենք հասկանում ստեղծագործություն ասելով:

Դ. Ի Դուբրովսկին ասում է.- Ստեղծագործությունը, դա մարդու ակտիվ, գիտակից գործունեությունն է, ուղղված իրականության ճանաչմանը, նորի ստեղծմանը, յուրահատուկ, բացառիկ՝ նախկինում երբևէ չհանդիպող իրերի, նյութերի, առարկաների, ինչպես նաև հասարակական հոգեկան և նյութական կյանքի կատարելագործում: Տարբեր հոգեբաններ տալիս են ստեղծագործության իրենց մեկնաբանումը, բայց հիմնական իմաստը նույնն է: Այն բերում է նրան, որ ստեղծագործությունն է, որ ստեղծում է նորը, բացառիկը, յուրահատուկը, գեղեցիկը: Մարդու ստեղծագործական ներուժը ծագում է մանկության ժամանակ, երբ ստեղծագործական գործունեությունը երեխայի համար կամային և անհրաժեշտ պրոցեսներ են: Չի կարելի մոռանալ, որ արվեստով զբաղվող երեխան, ունենում է ապրումների, զգացմունքայնության մեծ փորձ: Եթե երեխան սիրում է արվեստը, ապա այդ զգացումը նրա մոտ տարիների հետ ավելի ու ավելի կշատանա [14]:

Ի. Վ. Ուտեխինան իր աշխատանքներում այսպես է գրում <<Երեխան նախադպրոցական հասակում պետք է կարողանա իրեն հետաքրքրող նյութերով զբաղվի և առանց ինչ-որ խոչընդոտի ինտեգրվի հետագա կրթական համակարգի մեջ: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել հարմարավետ միջավայր և բացառել՝ հնարավորինս չափով երեխային նյարդայնացնող ֆակտորները>>:

Ի.Յ. Լերները, ուսումնասիրելով նախադպրոցականի ստեղծագործական ընդունակությունների դրսևորման եղանակները, առանձնացնում է ստեղծագործական գործունեության երեք փուլ, որոնք բնութագրում են միաժամանակ նախդպրոցահասակ երեխայի ստեխծագործեու և՛ ընթացքը և՛ մեխանիզմները:

Առաջին փուլը Ի.Յ.Լերները անվանում է մտահղցման ձևակերպման փուլ: Ստեղծագործելու մտահղցումը առաջանում է աստիճանաբար կուտակվող և հարստացող հուզազգացմունքային ոլորտի և ձևավորվող հուզական տպավորությունների հիման վրա, որոնք երեխայի մեջ ձևավորում են որոշակի կերպրային պատկերացումներ, դրանք ամրապնդվում են գեղագիտական փորձով, և երեխան փորձում է այդ ամենը անհապաղ որևէ կերպ վերարտադրել: Կրտսեր նախադպրոցական տարիքում ստեղծագործելու մտահաղացումն իրադրային է, պայմանավորված անսպասելի ակնթարթային տպավորություններով, այն ատահայտվում է հիմնականում նկարելու ցանկությամբ: Ավագ նախադպրոցական տարիքում ստեղծգործելու մտահաղացումն ավելի կայուն բնույթի է, այն կարող է արտացոլվել գեղագիտական գործունեության տարբեր ձևերում: Երեխան ընդունակ է ստեղագործելու կերպարվեստի միջոցով, գեղարվեստական խոսքի, երգարվեստի և պարարվեստի օգնությամբ, իսկ հաճախ՝ մի քանի ձևերում միաժամանակ:

Հաջորդ փուլն, ըստ Ի.Յ.Լերների կերպարի ստեղծման փուլն է, որի ընթացքում երեխան <<կառուցում է>> իր մտահղացումը: Նշված գործընթացին բնորոշ են հետաքրքիր լուծումներ՝ այլընտրանքային մոտեցումներ, չափերի ընդգծված շեղումներ, երևակայական տարրեր, անհավանական լրացումներ: Սովորաբար, երեխան իր ստեղծագործական մտահղացումը արտահայտում է գունային երանգավորմամբ, հորինած կերպարներով, հեքիաթային հերոների յուրովի պատկերմամբ և բոլորովին անհավանական անսովոր կերպարներով՝ հասկանալի միայն երեխայի կողմից:

Երրորդ փուլը ստեղծագործության վերլուծության փուլն է, որի ընթացքում երեխան պատրաստակամ և ամենայն պատասխանատվությամբ նկարագրում է սեփական տեղծագործությունը, բացատրում մտահղացման իրականցման եղանակները, արտահայտիչ միջոցների ընտրությունը [10, էջ 39]:

Այսպիսով կարող ենք ասել, որ երևակայությունը լայնորեն ներառված է մարդու ստեղծագործական գործունեության մեջ իր կյանքի տարբեր փուլերում: Երևակայությունը հանդիսանում է մտավոր, էսթետիկ և կամային որակների զարգացման միջոց և հենց նախադպրոցական տարիքում են դրվում ստեղծագործական երևակայության զարգացման հիմքերը:

1.2 Երևակայության զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Երևակայությունը հիշողության մեջ կուտակված մտապատկերներից նոր մտապատկերներ և նրանց նոր զուգորդություններ ստեղծելու և այդ եղանակով անձի համար նշանակալից խնդիրների լուծումներ որոնելու ներհոգեկան պրոցես է:

Երևակայությունը մարդկային ճանաչողության բարձրագույն ձևն է և միայն մարդուն է հատուկ: Երևակայությունը որպես բարձրագույն իմացական գործընթաց, ենթադրում է որոշակի գաղափարի, կերպարի, ձևի ստեղծում, որը հիմնված է փորձի վերամշակման և նորովի համադրման վրա: Երևակայության հիմքում են ընկած մտածողությունը, հիշողությունը, պատկերներն ու հույզերը, բայց դրա տարբերվող հատկանիշն է որևէ նոր երևույթի ստեղծումը:

Երևակայությունը մարդու ստեղծագործական աշխատանքի անհրաժեշտ մեխանիզմներից է և հատկապես ակտիվորեն է գործում այն դեպքում, երբ մարդը հայտնվում է անորոշության վիճակում, պրոբլեմային իրադրության մեջ: Երևակայությունը գիտելիքները դարձնում է կիրառելի խնդիրներ լուծելու ժամանակ և կարևոր է փորձ ձեռք բերելու և սովորելու գործընթացի համար [7, էջ 88]:

Երևակայությունը “թաքնված” պատկերների կամ զգացողությունների ձևավորում է, որոնք տեղի են ունենում առանց որևէ մեկի իմացության: Անհատը կարող է երևակայել՝ ըստ տրամադրության, որը կարող է լավ կամ վատ լինել՝ կախված իրավիճակից: Որոշ մարդիկ երևակայում են, որպեսզի դուրս գան լարվածությունից կամ մռայլ տրամադրությունից: Այն ընդունված է համարել ներքին կարողություն և մտքում շրջակա միջավայրի ընկալման զգացումից բխած տարրերից մասնակի կամ ամբողջական անձնական ոլորտներ ստեղծելու գործընթաց: Այս տերմինը տեխնիկապես կիրառվում է հոգեբանության՝ մեջ մտքում ինչ որ բան վերականգնելու գործընթացի համար՝ ընկալվող առարկա կամ պատկեր, որը նախկինում եղել է իմաստային ընկալման մեջ: Քանի որ այս տերմինի նմանատիպ կիրառումը հակասում է սովորական լեզվին, որոշ հոգեբաններ նախընտրել են այն նկարագրել որպես “պատկերում” կամ “պատկերներ”, կամ խոսել դրա մասին որպես “վերարտադրողական” -ի՝ ի տարբերություն “արտադրողական” կամ “կառուցողական” երևակայության [7, էջ 89]:

Յա.Լ. Կոլոմինսկին երևակայությունը սահմանում է որպես իրականության մի տեսակի արտացոլում, որն իրենից ներկայացնում է գոյություն ունեցող պատկերացումների հիման վրա նոր պատկերների և գաղափարների ստեղծում:

Լ.Ս. Վիգոտսկու աշխատություններում վերլուծված են երևակայության հիմնական բնութագրերը: Հետաքրքիր են գիտնականի այն նկատառումները, որ երեխայի երևակայությունը զարգանում է մտքից համեմատաբար անկախ և, հետևաբար, բավարար չափով չի վերահսկվում երեխայի կողմից: Լ.Ս. Վիգոտսկին նաև նշել է, որ երևակայության պատկերները կառուցված են իրականությունից և մարդկային փորձից վերցված տարրերից: Եվ քանի որ երեխայի փորձը այդքան էլ մեծ չէ, նրա երևակայությունը ավելի աղքատ է: Բայց միևնույն ժամանակ նա նշում էր, որ երեխայի երևակայությունը վառ է և հուզականորեն հագեցած [4, էջ 120]:

Երևակայության կարողությունը չի տրվում ի ծնե: Այն զարգանում է փորձի, գիտելիքի ձեռք բերման և հոգեկան բոլոր գործընթացների զարգացման հետ մեկտեղ: Ժամանակակից գիտության մեջ շատ ուսումնասիրություններ կան նվիրված օնտոգենեզում երևակայության զարգացմանը:

Երևակայության շնորհիվ մարդը ստեղծագործում է, խելամտորեն պլանավորում է իր գործունեությունը և ղեկավարում դրանք: Մարդկային գրեթե ողջ նյութական և հոգևոր մշակույթը մարդկանց երևակայության և ստեղծագործության արդյունք է: Երևակայությունը մարդուն դուրս է հանում իր ակնթարթային գոյության սահմաններից, հիշեցնում է նրան իր անցյալը և բացում ապագայի պատկերը [5, էջ. 19]:

Ունենալով հարուստ երևակայություն՝ մարդը կարող է ապրել տարբեր ժամանակներում, ինչը չի կարող իրեն թույլ տալ աշխարհի ոչ մի կենդանի էակ: Անցյալը ամրագրված է հիշողության պատկերների մեջ, իսկ ապագան ներկայացված է երևակայության և ֆանտազիաների մեջ:

<u>Երևակայությունն ընթանում է շնորհիվ համադրման հետևյալ եղանակների.</u>

- Ագլյուտինացիա/ կցականություն- Մարդն ամենատարբեր ձևերով համադրում է կյանքում չմիացվող առարկաներից, առանձին հատկությունների կազմավորված մտապատկերներ և ստեղծում համակցվող մտապատկերներ: Օրինակ՝ ջրահարսը, կենտավրոսը:
- Հիպերբոլիզացիա/ չափազանցում- Այս ձևին բնորոշ է ոչ միայն մեծացումն ու փոքրացումը, այլ նաև առարկայի մասերի թվական փոփոխությունն ու տեղաշարժը: Օրինակ՝ յոթ գլխանի վիշապը:
- Սրում- Մարդը վերցնում է առանձին մի մասը և այն դարձնում տիրապետող: օրինակ ծաղրանկարները:

- Տիպականացում-Մարդն առանձնցնում է էականը, որը կրկնվում է մի շարք մարդկանց մեջ, միանման փաստերում [7, էջ 101]:

Երևակայության ակտիվության գործընթացները հարուստ են ու բազմազան:

Երևակայության տեսակներն են.

- ✓ ***ոչ կամածին երևակայությունը*** առաջանում է ինքնաբերաբար, անկախ մարդու կամքից և գիտակցական ցանկությունից;
- ✓ ***կամածին երևակայությունը*** առաջանում է մարդու գիտակցական ցանկությամբ՝ պրոբլեմային իրադրություններում լուծումներ գտնելու համար;
- ✓ ***ակտիվ երևակայությունը*** մարդուն մղում է ակտիվ նպատակադրումների և գործողությունների: Ակտիվ երևակայության արդյունքները մարդը փորձում է իրագործել կյանքում այն դառնում է աձի գործունեության, նրա իրական վարքի վրա նկատելի կողմնորոշող ազդեցություն ունեցող ներքին գործոն;
- ✓ ***պասիվ երևակայությունը*** մարդուն չի մղում ակտիվ գործողության և մնում է որպես ներհոգեկան ինքնանպատակ ակտիվություն: Պասսիվ երևակայությունը դիտվում է անուրջների, զգայախաբությունների և երազների ձևով;
- ✓ ***վերարտադրական երևակայության*** դեպքում մենք ինքնաբերաբար կամ եբեմն էլ կամածին կերպով ձգտում ենք մտքով տեսնել, պատկերացնել այն մարդկանց, իրերն ու իրադարձությունները, որ նկարագրել է հեղինակը, այսինքն վերարտադրել երևակայության այն գործընթացները, որ նա ունեցել է իր ստեղծագործությունը գրելիս;
- ✓ ***ստեղծագործական անվանում*** են երևակայության այն տեսակը, որի շնորհիվ ստացվում են իմացական նոր արդյունքներ՝ մտապատկերներ, դրանց զուգորդություններ, վարկածներ ու կռահումներ: Այսպիսի երևակայությունը անձի ինքնուրույնության և ինքնատիպության դրսևորման ուղիներից մեկն է: Ստեղծագործական երևակայությունը պարզապես չի վերարտադրում այն, ինչ տրված է եղել մարդու ընկալումներում, այն հեռանում է անմիջականորեն տրվածից, ստեղծում է նոր, ոչ ակնհայտ արդյունքներ, բայց երևակայության այդ թռիչքի վերջնական նպատակը իրականության ավելի խոր իմացությունն է: [14]

Այսպիսով, երևակայության ունակությունը տարբերվում է անհատական մակարդակում. հստակ առաջադրանքներ կատարելու և, ընդհակառակը, նորը փնտրելու ընդունակությունները տարբեր չափով են զարգացած լինում:

Երևակայությունը հանդիսանում է մտավոր, էսթետիկ և կամային որակների զարգացման միջոց: Այն երեխայի կյանքի գլխավոր մասն է և չափազանց կարևոր է երեխայի զարգացման համար ամենավաղ հասակից:

1.3 Նախադպրոցականների երևակայության զարգացման ուղիները ոչ ավանդական նկարչության գործընթացում:

<<Աշխարհը երջանիկ կլինի միայն այն ժամանակ, երբ ամեն մի մարդ նկարիչի հոգի կունենա: Այլ կերպ ասած, երբ ամեն մեկն ուրախություն կգտնի իր աշխատանքի մեջ>>

Ռոդե

Մենք՝ ամենքս մանկական տարիքում նկարիչ էինք: Ամեն մի երեխա 2-3 տարեկան հասակում սկսում է նկարել: Նա նկարում է ամեն ինչ, ինչ տեսնում կամ երևակայում է, անգամ այն ինչ զգում է: Նկարելու հակումը նրա մոտ կարող է պահպանվել մինչև դեռահասության շրջանը: Հաճախ այդ ոգևորվածությունը դառնում է մասնագիտություն, բայց ավելի հաճախ այն շուտ անցնում է:

Նկարչական արվեստին հավատարիմ են մնում օժտված, շնորհալի երեխաները: Նույն տարիքի երեխաները՝ աշխարհի որ ծայրում էլ լինեն միշտ նույն բաներն են նկարում: Կարելի է ասել, որ նրանք անցնում են նույն փուլերը: Նրանց երևակայությունները զարմանալիորեն իրար նման են: Ինչու են երեխաները նկարում: Դա օրգանիզմի զարգացմանը նպաստող ճանապարհ է: Կյանքի առաջի տարիներին զարգանում է տեսողությունը՝ տեսնելու և ճանաչելու ընդունակությունը: Երեխան ընկալում է հորիզնականը և ուղղահայացը, այդ իսկ պատճառով նրա նկարածում գերակշռում է ուղիղ գիծը: Հետագայում նա ընկալում է առարկայի ձևը: Դա ավելի արագ է լինում քան խոսքի զարգացումը, և այդ իսկ պատճառով, երեխան իր ընկալած աշխարհը սկսում է նկարել, քանի որ չի կարող այն արտահայտել խոսքերով: Նկարչությունը ոչ միայն նպաստում է տեսողության, կորդինացիոն շարժումների, խոսքի և մտածելակերպի զարգացմանը, այլ նաև օգնում է արագ ընկալել շատ բարդ երևույթներ: Անգամ բժշկության մեջ կա նկարչությամբ բուժման փորձ: Քանի որ նկարելը՝ դա երեխայի բնական պահանջն է, այն բարդույթներ չի ծնում [9, էջ 75]:

Նախադպրոցական տարիքի երեխաների համար նկարչությունը ամենահետաքրքիրն է: Այն թույլ է տալիս երեխային արտահայտել իր վերաբերմունքը արտաքին աշխարհի նկատմամբ:

Նկարչությունը նպաստում է երեխայի զգացմունքների ձևավորմանը: Ֆրեբելը, Կոմենսկին շատ են կարևորում նկարչության դերը երեխայի մտածելակերպի և մտահորիզոնի զարգացման, անհատի ձևավորման գործում:

Նկարչության ժամանակ հարմար պայմաններ են ստեղծվում արվեստի ընկալման և գեղարվեստական ճաշակի զարգացման համար: Առարկաների ուսումնասիրումը, նրանց հատկանիշների պարզաբանումը նպաստում է երեխաների մոտ չափի, ձևի, գույնի զգացումի ձևավորմանը:

Երեխաների համար նկարչությունը երջանիկ և ուրախ ոգեշնչվածության աշխատանք է և երբեք պարտադրելով տաղանդ չես ստեղծի: Մանկավարժական ճիշտ մոտեցումը այն է, երբ դաստիարակը ոչ թե պարտադրում կամ ստիպում է, այլ զարմացնում է երեխային նկարչության մեջ իր յուրօրինակ մոտեցմամբ և շարժում երեխայի հետաքրքրասիրությունը [10, էջ 8]:

Նախադպրոցական տարիքի երեխայի ուսուցման գործընթացում կարևորվում է խաղային մոտեցումը: Նկարվող առարկան պետք է ներկայացնել երեխային, առաջացնել նրա մոտ վառ երևակայություն: Ինչպես ասել է մի իմաստուն *<<Երեխան դա դատարկ տարա չէ, որ լցնես, այլ կրակ, որը պետք է վառես>>*: Եվ շարունակելով նրա միտքը ասենք, որ այդ կրակը բոցավառելու համար անընդհատ թթվածին է պետք, իսկ այդ թթվածինը երեխայի երևակայությունը շարժող, խթանող երևույթներն են: Կարևորվում է նաև այն, որ երեխան իր զբաղմունքից հաճույք ստանա և ուրախանա աշխատանքի արդյունքից: Երբ պարապմունքի ընթացքում երեխաների աչքերը փայլում են, ուրեմն մանկավարժը ճիշտ է կատարում աշխատանքը:

Շատ մանկավարժներ օգտագործում են նկարչության դասավանդման ոչ ավանդական ձևեր և դա երեխաների կողմից շատ ոգևորությամբ է ընդունվում: Դրանցից ամենամատչելին ջրաներկով մատների միջոցով նկարչությունն է:
Երեխաները շատ են ոգևորվում, երբ նկար են ստեղծվում իրենց մատների միջոցով: Այս պրոցեսը հաճույք է պատճառում ոչ միայն երեխաներին, այլ նաև մեծերին: Երբ նկարչության այս տարբերակով ծնվում է նկարը՝ երեխային թվում է թե ինքը հրաշագործ է: Երեխան իրավունք ունի ինքնուրույն ընտրել գունավոր և հասարակ մատիտները, ջրաներկը, գուաշը, գունամատիտը, գունավոր կավիճները, պլաստիլինը և այլ նյութեր՝ աշխատելու համար: Այս նյութերը պետք է գտնվեն երեխաների համար հասանելի վայրում: Աշխատանքի ընթացքում

երեխաները մեծ փորձ են ձեռք բերում և ժամանակի ընթացքում իրենք են առաջարկում թեմային համապատասխան աշխատանքի ընթացքը [10, էջ 16]: Ոչ ավանդական նկարչությունը լայն շրջանակ է բացում երեխաների երևակայության համար, հնարավորություն է տալիս երեխային ներգրավվել ստեղծագործության մեջ, զարգացնել երևակայությունը, ցուցաբերել անկախություն և ինքնուրույնություն:Ոչ ավանդական նկարչությունը հիանալի միջոց է փոքրիկ գը-լուխգործոցներ ստեղծելու համար:Այս տեխնիկայի օգտագործումը թույլ է տալիս երեխաներին ավելի հանգիստ և համարձակ զգալ, ավելի ինքնաբուխ:Այն զարգացնում է լիակատար ազատություն ինքնարտահայտման համար:Այն հետաքրքրքշարժ գործընթաց է, որը զարմացնում և հիացնում է երեխային:Այն նպաստում է մանկական վախերի վերացմանը, սովորեցնում է աշխատել բնական նյութերի հետ:

Ոչ ավանդական մեթոդով նկարչությունը երեխաներին հնարավորություն է տալիս խաղալով ծանոթանալ պարզագույն նյութերի տեսակներին և դրանց հատկություններին: Նա կարող է նկարել տարբեր միջոցներով՝ գունավոր մատիտներով, կարտոֆիլով, սպունգով, խցանով, տերևով և օգտագործել տաբեր նյութեր:

Հինգ տարեկան երեխան կարողանում է պատասխանել նկարի վերաբերյալ հարցերին, պատմել պատկերված գործողությունների մասին, զանազանել մի շարք առարկաների գույնն ու ձևը: Հինգից վեց տարեկան երեխաները ընդունակ են ավելի խորացված ընկալելու արվեստի ստեղծագործությունները: Նրանք կարող են ինքնուրույն պատմել, թե ինչ է պատկերված, առանձնացնել կերպարի էական նշանակություն ունեցող բնորոշ մասերը, հատկանիշները, գեղարվեստական արտահայտչամիջոցները:

Մանկապարտեզի ավագ խմբում շարունակվում է զանազան ձևերով նկարելու եղանակների յուրացումը: Մեծ նշանակություն է ձեռք բերում նաև մի քանի մասերից բաղկացած առարկաներ պատկերելը՝ նրանց ծավալային և դասավորվածության հարաբերակցությունը հաշվի առնելով:

Գունավոր մատիտներով և ներկերով նկարելը երեխաներին օգնում է յուրացնել համատարած և կանոնավոր ներկապատելու ունակությունը, ծանոթացնում է սպեկտորի հիմնական գույներին՝ կարմիր, կապույտ, դեղին և ճեզոք գույներին՝ սև, գորշ, սպիտակ, ինչպես նաև որոշ երանգներին՝ երկնագույն, վարդագույն: Այս տարիքի երեխաների հետ կատարվող աշխատանքներից է դեկորատիվ նկարչությունը և դեկորատիվ ապլիկացիան: Դեկորատիվ նկարչության մեջ ընտրվում են նախշի գույները, յուրացվում են նախշը տարբեր

ձևերով տեղադրելու կոմպոզիցիոն հնարքները: Ձեռքի շարժումները դառնում են ավելի ճկուն ու ազատ: Երևան է գալիս աշխատանքների ավելի ճիշտ գնահատումը [5, էջ 98]:

Ավագ տարիքային խմբում երեխաները աստիճանաբար անցնում են բնօրինակից պատկերելուն: Նկարչության, ծեփակերտման, ապլիկացիայի պարապմունքներին նրանք սովորում են իրենց պատկերածը ավելի նմանեցնել իրենց առջև դրված բնօրինակին (ձևով, կառուցվածքով, գույներով): Բնօրինակի բնորոշ առանձնահատկությունները ընդգծելիս երեխաներն օգտագործում են համաչափությունը, գիծը, ուրվապատկերը, գույնը:

Կերպարվեստային գործունեության պարապմունքներին դաստիարակը իր ուշադրությունը կենտրոնացնում է յուրաքանչյուր երեխայի մոտ դիտողականություն, երևակայություն, տեսողական հիշողություն զարգացնելու վրա: Բնական օբյեկտներ կարող են լինել բանջարեղենները, մրգերը, խաղալիքները, ամանեղենը և բույսերը:

Նկարչության պարապմունքներին պետք է երեխաներին սովորեցնել օգտվել նոր նյութերից՝ ընդգծելով դրանց տարբերությունը արդեն ծանոթ նյութերից: Կարելի է մեկ նկարում ածխամատիտի և գուաշի, գուաշի և սանգինի, գուաշի և գունավոր մատիտի զանազան զուգակցումներ անել: Դա հնարավորություն է տալիս ստանալ պատկերի լավ արտահայտչականություն:

Ավագ նախադպրոցականներին անհրաժեշտ է ծանոթացնել ներկապնակի վրա ներկեր խառնելուն, որպեսզի նրանք կարողանան ստանալ գույների զանազան նրբերանգներ: Եթե սպիտակին խառնվի կարմիր կամ կապույտ ներկ, գույնը կփոխվի, կդառնա բաց, ձեռք կբերի գունային նոր երանգ: Ձմրուխտականաչը սպիտակի հետ խառնելով դառնում է ծովի ալիք հիշեցնող կապտականաչավուն հաճելի գույն և այլն [5, էջ 107]:

Ավագ նախադպրոցականները ավելի հարցասեր են, ձգտում են հասկանալ կերպարվեստին վերաբերող շատ խնդիրներ, ինչը և հնարավորություն է տալիս զարգացնել արվեստի ստեղծագործությունները ըմբռնելու ունակությունը, առաջացնել հուզական վերաբերմունք պատկերված երևույթի նկատմամբ:

Այսպիսով, ոչ ավանդական նկարչության գործունեության ընթացքում պետք է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որպեսզի երեխան ինքնուրույն գործի, փնտրի և գտնի լուծումներ իր նկարի արտահայտչականության ապահովման համար, ինքնուրույն կարողանա գտնի, իսկ եթե անհրաժեշտ է ապա և փոփոխի գույները այնպես, որպեսզի արտացոլի ամբողջությամբ պատկերվածի բնույթը, կազմի գունային և տարբեր երկրաչափական պատկերներով զարդանախշեր և

այլ տիպի ստեղծագործական աշխատանքներ: Նման աշխատանքների ստեղծումը նպաստում է նախադպրոցականի մտավոր կարողությունների ըիդլայնմանը, որի արդյունքում էլ ակտիվանում է նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը և ստեղծագործական երևակայությունը:

Պարապմունք

Նկարչություն կարտոֆիլով.

Օգտագործվող նյութեր. Ցանկացած գույնի և չափի թուղթ երեխաների թվով, գուաշ, վրձին երեխաների թվով, ներկաման և սպունգ երեխաների թվով, տարբեր չափերի և ձևի կարտոֆիլներ երեխաների թվով, փայտիկներ:

Նպատակը՝ խթանել երեխաների հետաքրքրասիրությունը և երևակայությունը, սովորեցնել աշխատանքային միջոցներից ճիշտ օգտվելու և աշխատելու ձևերը, ձևավորել կոկիկ աշխատելու կարողություն:

Ընթացքը. Զրույց կարտոֆիլի մասին:

Դաստիարակ. Երեխաներ մենք բոլորս սիրում ենք այս բանջարեղենը, ճի՞շտ է: Սակայն այսօր այն չենք ուտելու, այլ կատարելու ենք շատ հետաքրքիր աշխատանք: Տարբեր նախշերի միջոցով, որոնք ես նախապես պատրաստել եմ ձեզ համար, և ջրաներկի միջոցով պատկերը փոխանցելու ենք թղթին: Ուրեմն եկեք ընտրենք ձեզ դուր եկած նախշը: Ես ձեզ ցույց կտամ, թե ինչպես է պետք աշխատել:

Կարտոֆիլը գուաշով ներկելով երեխաներին ցույց ենք տալիս, թե ինչպես պետք է աշխատել: Որից հետո թույլ ենք տալիս ինքնուրույն աշխատել: Պարապմունքի ընթացքում հետևում էինք նաև երեխաների կողմից գույների ընտրությանը: Պարապմունքը ավարտվեց խրախուսական աստղիկներով:

Պարապմունք

Թեմա՝ «Կախարդական քաղաքը-ստորջրյա թագավորությունը»

Նպատակը՝ երեխաներին սովորեցնել նկարել ոչ ավանդական տեխնիկայով թաց թղթի վրա, զարգացնել երևակայությունը և ստեղծագործական ունակությունները:

Անհրաժեշտ պարագաներ. սպիտակ թուղթ, գուաշ, սպունգ, վրձիններ, անձեռոցիկներ.

Ընթացքը.

Այսօր մենք ճամփորդելու ենք դեպի կախարդական ստորջրյա թագավորություն: Բայց եկեք պայմանավորվենք չաղմկել, քանի որ ծովը այսօր շատ հանդարտ է: Գույների անսովոր թեթևությունը, նոր գույներ ստանալը հենց նկարի վրա, ձեր աշխատանքը կդարձնեն զարմանալիորեն հետաքրքիր: Դուք ձեզ հրաշագործներ կպատկերացնեք և կախարդական քաղաք կպատկերեք: Դուք կռահեցի՞ք, թե ինչպես ենք մենք նկարելու: Մենք այսօր նկարելու ենք թաց թղթով: Իսկ ի՞նչ է դա թաց թղթով նկարչությունը: Այսօր գլխավոր գործիքը լինելու է փոքրիկ սպունգը: Մենք դրանով թացացնելու ենք մեր թուղթը: Այն թացացնում ենք արագ շարժումներով (ցուցադրում): Այնուհետև թաց թղթի վրա ներկում ենք: Եվ այսպես եթե մենք ուզում ենք զգալ կախարդանքը, ուրեմն մեր նկարչությունն էլ կլինի հեքիաթային:

Մինչ աշխատանքը սկսելը ես կկարդամ ձեզ հեքիաթից մի հատված:

Կար չկար մի ծերունի, որն ապրում էր իր կնոջ հետ ծովի ափին փոքրիկ խրճիթում: Ծերունին ամեն օր ձկնորսության էր գնում:

Երեխաներ ի՞նչ եք կարծում, ի՞նչ գույնի էր ծովը:

Երեխաներ. Կապույտ

Դաստիարակ. Եվ այդ հանգիստ կապույտ ծովում ապրում էր բարի կախարդական «ոսկե ձկնիկը»: Բայց նա մենակ չէր ապրում ստորջրյա թագավորությունում: Երեխաներ ի՞նչ եք կարծում, ովքեր էին ապրում այնտեղ բացի ձկնիկից:

Երեխաներ. Խեցիներ, ջրիմուռներ, խխունջներ, ութոտնուկներ, խեցգետիններ, դելֆիններ:

Դաստիարակ. Իսկ ի՞նչ գույնով ենք նկարելու ծովը:

Երեխաներ. Երկնագույն:

Դաստիարակ. Իսկ ոսկե ձկնիկին:

Երեխաներ. Դեղին, նարնջագույն:

Դաստիարակ. Իսկ ծովի ջուրը շարժվո՞ւմ է:

Երեխաներ. Շարժվում է, եթե քամին է փչում, կամ նավերն են նավարկում:

Դաստիարակ. Ապա նայեք ինչպես եմ նկարելու ծովը: Սպունգով թացացնում եմ թուղթը աջից ձախ արագ շարժումներով: Լայն վրձինով թղթի վերևից գիծ եմ անցկացնում և ներկը իջնում է ներքև: Դուք նույնպես նույնը արեք և թուղթը բարձրացրեք ուղղահայաց, որպեսզի ներկը իջնի ներքև: Մի փոքր ներկը չորանա

և կնկարենք ստորջրյա թագավորության բնակիչներին արդեն բարակ վրձինով: Եթե ցանկանում եք կարող եք պատկերել նաև ոսկե ձկնիկի կախարդական ամրոցը:

Երբ բոլոր երեխաները վերջացրեցին աշխատանքը, թղթերը դասավորեցինք սեղանին և ստացվեց մեծ կախարդական թագավորություն:

Ինչ մեծ հանդարտ ծով է մեզ մոտ ստացվել, և քանի որ ծովը հանդարտ է ոսկե ձկնիկները շատացել են, նրանք բոլորը այնքան գեղեցիկ են: Երբ ես նայում եմ ձեր նկարներին զգում եմ որ այս կախարդական աշխարհում տիրում է բարին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքի երեխան ընկալում է աշխարհը տպավորությունների և կերպարների միջոցով: Հուզական տպավորություններն ու ապրումները խորը հետք են թողնում երեխայի կյանքում և երբեք չեն մոռացվում: Մանկության հուզական ներդաշնաությամբ է մեծապես պայմանավորված մարդու հետագա զգացողությունները և վստահությունն աշխարհի հանդեպ: Աշխարհի կերպարային ընկալման հիմքում նույնպես ընկած է երեխայի բարձր հուզականությունը և երևակայության անսահման հնարավորությունները: Հուզական և կերպարային աշխարհընկալման արդյունքում ի հայտ են գալիս և դրանց հիման վրա կառուցվում ստեղծագործական ընդունակությունները:

Նախադպրոցական տարիքի առաջին կեսում երեխայի մոտ գերակշռում է վերարտադրողական երևակայությունը, որը ստացված տպավորությունները մեխանիկորեն վերարտադրում է պատկերների տեսքով: Ավագ նախադպրոցական տարիքում, երբ ձևավորվում է կամային հիշողությունը, մեխանիկորեն վերարտադրող երևակայությունը վերածվում է ստեղծագործականի, այսինքն ոչ կամայինից՝ պասիվից, դառնում է կամային՝ ակտիվ երևակայություն:

Նկարչությունը թույլ է տալիս երեխային արտահայտել իր վերաբերմունքը արտաքին աշխարհի նկատմամբ, նպաստում է երեխայի զգացմունքների ձևավորմանը, գեղարվեստական ճաշակի զարգացմանը: Առարկաների ուսումնասիրումը, նրանց հատկանիշների պարզաբանումը նպաստում է երեխաների մոտ չափի, ձևի, գույնի զգացումի ձևավորմանը: Նախադպրոցական տարիքի երեխայի ուսուցման գործընթացում կարևորվում է խաղային մոտեցումը: Նկարվող առարկան պետք է ներկայացնել երեխային, առաջացնել նրա մոտ վառ երևակայություն: Նկարչության պարապմունքների ընթացքում պետք է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որպեսզի երեխան ինքնուրույն գործի, փնտրի և գտնի լուծումներ իր նկարի արտահայտչականության ապահովման համար, ինքնուրույն կարողանա գտնի, իսկ եթե անհրաժեշտ է ապա և փոփոխի գույները այնպես, որպեսզի արտացոլի ամբողջությամբ պատկերվածի բնույթը, կազմի գունային և տարբեր երկրաչափական պատկերներով զարդանախշեր և այլ տիպի ստեղծագործական աշխատանքներ: Նման աշխատանքների ստեղծումը նպաստում է նախադպրոցականի մտավոր

կարողությունների ըհդլայնմանը, որի արդյունքում էլ ակտիվանում են նրա ստեղծագործական ունակությունները և ստեղծագործական երևակայությունը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ոչ ավանդական տեխնիկայի տարրերի նպատակային կիրառումը արդյունավետ են նպաստում նախադպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացմանը, նրանք ավելի հաճույքով են ավարտին հասցնում աշխատանքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Бабенко Е. А, Кашурина Л.Ф, Теоретические основы развития творческих способностей //Научно методический журнал <<Наука и образование: новое время>> № 6, 2017,-с 561
2. Варкки Н. Ребенок в мире творчества: Творческое и эстетическое воспитание дошкольников, 2003. https://cyberleninka.ru/article/n/hudozhestvenno-esteticheskoe-razvitie-doshkolnikov-v-protsesse-izobrazitelnoy-deyatelnosti
3. Ветлугина Н. А. Художественное творчество и ребенок. М. 2009
4. Выготский Л.С. Собрание сочинений: В 6-ти т. Т.2. Проблемы общей психологии/Л.С. Выготский. – М.: Педагогика, 1983. – 368с.
5. Волынкин В.И. Художественно-эстетическое воспитание и развитие дошкольников: Учебное пособие/В.И. Волынкин. – М.: Феникс, 2007. – 448с. – ISBN 978-5-222-11688-3.
6. Дьяченко О.М. Воображение дошкольника: Пособие для педагогов дошк. учреждений/О.М.Дьяченко. – М.: Знание, 1986. – 96с.
7. Ильин Е. П. Психология творчества, креативности, одаренности; переиздание 2013. http://tropa.tomsk.ru/elibraries/ pdf
8. Козлова С.А., Куликова Т.А. Дошкольная педагогика.-М.: Академия, 2000.
9. Королёва С.Г. Развитие творческих способностей детей 5-7 лет: Пособие для педагогов-психологов ДОУ/С.Г.Королёва. – М.: Учитель, 2009. – 114с. – ISBN 978-5-7057-2078-1.
10. Ковалицкая Л.М. Методика формирования навыков изобразительной деятельности в ДОУ: Пособие для воспитателей/Л.М. Ковалицкая. – М.: Аркти, 2008. – 24с. – ISBN 978-5-89415-671-2.
11. Куцакова Л.В., Мерзлякова С.И. Воспитание ребенка-дошкольника.-М. 2004.
12. Осмоловская И.М., И.Я. Лернер о процессе обучения: //современное прочтение // 2017. Т.1, №3
13. https://cyberleninka.ru/article/n/tvorcheskie-sposobnosti-v-doshkolnom-vozraste-kak-osobaya-potentsiya-voobrazheniya/viewer
14. http://boon.am/imagination/